

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏՅԱՆԻ
ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պ. Ա. ԶՈՐԱՆՅԱՆ

Վրաստանի և Հյուսիսային Ադրբեջանի միացումը Ռուսաստանին, Ռուսաստանի մղած պատերազմները Պարսկաստանի (1804—1813 թթ.) ու Թուրքիայի (1806—1812 թթ.) դեմ, օրակարգի մեջ էին դնում նաև Հայաստանի ազատագրումը և ոգևորություն առաջացնում մեր ժողովրդի լայն խավերում, որոնք այդ պատերազմների և ռուսական զորքերի առաջխաղացման հետ էին կապում Թուրք-պարսկական լծից հայրենիքի փրկության հույսը։ Անցողիկների այս շրջանի առաջավոր քաղաքական ու հասարակական գործիչներից էր Հարություն Աստվածատուրի Արարատյանը (Артеми́й Болга́нов Араратский)¹։ Նա ծնվել է 1774 թ. Վաղարշապատում։ Մինչև 1795 թ. ապրել է ծննդավայրում, եղել Երևանի խանության մի շարք վայրերում և ականատես դարձել խանական իշխանությունների կողմից տեղական բնակչության նկատմամբ կիրառվող դաժան քաղաքականությանը և աշխատավոր ժողովրդի հարստահարմանը։ Հայրենիքում գործունեության հեռանկար չտեսնելով, Հ. Արարատյանը որոշում է անցնել Ռուսաստան և 1795 թ. հուլիսի 15-ին առևտրական քարավանի հետ ճանապարհվում է Թիֆլիս։ 1795 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին, գտնվելով Վրաստանում, նա ականատես է լինում Աղա-Մահմադ խանի Թիֆլիս կատարած արշավանքին ու դրա հետևանքներին։ Դեկտեմբերին ճանապարհվում է հյուսիս, հասնում Ղզլար և այնտեղ ծառայության մտնում ռուսական բանակում՝ հայազգի մայոր Ա. Սերբերովի մոտ, մասնակցում 1796 թ. արշավանքին, իսկ 1797 թ. անցնում է Պետերբուրգ²։

Այստեղ գտնվելու նրա առաջին տարիների մասին տեղեկություններ գրեթե չեն պահպանվել։ 1808 թ. Հ. Արարատյանն արդեն որդեգրված էր նշանավոր տպագրիչ Գրիգոր Խալիլյանի այրու՝ Կատարինե Զաքարյանի կողմից³ և զբաղվում էր վաճառականությամբ⁴։ 1813 թ. Արարատյանը Պետեր-

¹ Նրան չպետք է շփոթել XIX դարի առաջին քառորդում Նոր Նախիջևանում ապրած Հարություն Տեր-Մկրտչյան Արարատյանի (Արարատով) հետ (հիշատակվում է հետևյալ փաստաթղթերում. Մաշտոցի անվ. Մատենադարան, լազարյանների արխիվ, թղթ. 102, գործ 6. Վավերագրեր 58, 110, 120, 139, 158, 161, 198 և այլն)։

² Ա. Սերբերովի հեղինակ է Դաղստանի և Հյուսիսային Ադրբեջանի «Համառոտ նկարագրություն»։ «Краткое историческое описание северной и южной части дагестанской Персии, примерно с числе дворов, о религии, о свойстве, обычаях и промыслах жителей, обитающих в провинциях Дербентской, Кубинской, Сальянской, Бакинской, Шемахинской и под чьим владением...» учинено майором Серебровым, ч. I—II (տե՛ս «История, география и этнография Дагестана XVIII—XIX вв.», М., 1958, էջ 173—195)։

³ Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961, էջ 152։

⁴ Նույն տեղում, էջ 154։ Ըստ երևույթին, պետական ծառայության անցնելով, նա այլևս զաղարել է վաճառականությամբ զբաղվել, դրամը փոխ է տվել Մոսկվայի հայկական եկեղեցի-6 Հանդես, № 1

բուրգուի ուսերեն լեզվով հրատարակում է նախապես հայերեն շարադրված իր «Կյանքը»⁵։ Սեփական կենսագրությունը գրքի առանցք դարձնելով, հեղինակը ռուս ընթերցողին ներկայացնում էր Անդրկովկասում տիրող իրավիճակը, հայ ժողովրդի փաստական կացությունը, ընդգծում նրան օգնության հասնելու անհրաժեշտությունը։ Նա ջանում է համոզել ռուսական քաղաքական ու ռազմական գործիչներին, թե պարսկական խանությունների գրավումը դյուրին գործ է⁶։

Գիրքը, ինչպես և ակնկալվում էր, իր վրա է բեռում ժամանակի շատ հասարակական-քաղաքական գործիչների ուշադրությունը⁷ և թարգմանվում գերմաներեն (1821)⁸ ու անգլերեն (1822)⁹։ «Բոլոր Ռուսիա և Եւրոպա ընթերցաւ դայն, բայց ո՞վ արդեօք շարժեցաւ յօգնութիւն Հայաստանի»¹⁰։— Արարատյանի գրքի մասին գրում էր ժամանակակից Մ. Սալլանթյանը՝ հաշատուր Աբովյանին։ Սրանից նաև երևում է, որ ճիշտ է հասկացվել գրքի հիմնական նպատակը։

Հ. Արարատյանը շահում է ցարական կառավարության վստահությունը, կապեր հաստատում մի շարք պետական ու ռազմական գործիչների հետ¹¹։

ցուն և ասյրել պաշտոնից ստացվող եկամուտներով և մի առ ժամանակ նաև դրամի տոկոսներով (հմտ. ծան. 40)։ Ի դեպ, 1811 թ. Պետերբուրգում Գրիգոր քահանայից Հ. Արարատյանը գնել է «Ազգաբանութիւն նահապետացի» ձեռագիրը (տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6591, էջ 2ա—28բ), իսկ 1814 թ. օրինակել տվել «Գիրք որ կոչի ճանաչումն անշարտութեան, արարեալ յԱղամայայ Զուղայեցոյ, որ ի ցեղէն խօճայ Մինասեան, յամի տեառն 1762» (նույն տեղում, էջ 29ա—35ա)։ Ստացող Հարություն Արարատյանի հիշատակագրությունները տե՛ս նույն տեղում, էջ 2ա և 29ա։ Ընդօրինակված է նաև Մխիթարյանների դեմ Արարատյանի 1808 թ. գրած բանաստեղծությունը՝ էջ 85բ—86բ։

⁵ «Жизнь Артемия Арапатского...», ч. I—II, СПб., 1813. Գիրքն ավարտվում է հեղինակի՝ Պետերբուրգ հասնելու մասին նշումով և միակ աղբյուրն է նրա կյանքի մինչպետերբուրգյան շրջանի վերաբերյալ։

⁶ Հմտ. Կ. Դանիելյան, Հարություն Արարատյանի մեմուարները (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 3, էջ 52)։

⁷ К. Григорьян, Жизнь Артемия Арапатского («Вопросы изучения русской литературы XI—XX веков», М.—Л., 1958, էջ 104—115)։ նույնի՝ Արտ. Արարատյանի գիրքը Պուշկինի գրադարանում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, № 11, էջ 87—88)։ Գ. Паицадзе, Об одной заметке А. С. Пушкина, «Ժաճեղ», ისტորიის, არქეოლოგიის, ეთნოგრაფიისა და ხელოვნების ისტორიის სერია, 1972, № 2, էջ 79—80, և։ Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 6, Երևան, 1955, էջ 25։

⁸ Artemius von Wagarschapat, Leidengeschichte seiner Jugend, seine Entweilung, seine Zug mit der Russischen Armee nach Persien und zurück nach Rußland,—aus dem armenischen ins russische übersetzt vom Verfasser; aus dem russischen begleitet mit einer Einleitung über Geographie, Geschichte, Religion und Literatur von Armenien, Consistorialrath D. Joh. Heinr Busse, Halle, 1821.

⁹ Artemi of Wagarschapat, Memoirs of the life of Artemi of Wagarschapat, near mount Ararat in Armenia, from the original Armenian written by himself, London, 1822, «Կյանքի» երկրորդ մասը հատվածաբար թարգմանվել է նաև վրացերեն և տպագրվել «ճամբարում արժեք արժատեղության սպարտեղության մեջ» XVIII საუკუნის დამლევის (მასალა ისტორიისათვის)՝ վերնագրով («ივერია», 1885, № 9, էջ 68—81, № 10, էջ 53—71, № 11, էջ 53—69)։ «Կյանքը» հայերենի է թարգմանել Պերճ Պուշկյանը («Վաղարշապատից Հարություն Արարատյանի կյանքը», թարգմ. ռուսերենից Պ. Պ., Թիֆլիս, 1892)։

¹⁰ «Գիվան հաշատուր Աբովյանի», Բ, Երևան, 1948, էջ 94։

¹¹ Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, էջ 156—157։ С. Г. Арешян, Армянская печать и царская цензура, Ереван, 1957, էջ 80—84։

և աշխատանքի ընդունվում «Կոլեժսկի սեկրետարի» պաշտոնով: Նա աշխատում է իր կապերն օգտագործել հայրենակիցներին օգտակար լինելու համար, պաշտոնավարելով ու գործելով Ռուսաստանում, չի կտրվում իր ժողովրդից: Պատահական չէ, որ հաճախ Հ. Արարատյանի միջնորդությանն էր դիմում նաև Ներսես Աշտարակեցին:

1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրով Ռուսաստանին էին անցել անդրկովկասյան մի շարք խանություններ, այդ թվում և Նուխի (Շաքիի) խանությունը: Մինչև այդ խանության սահմաններում ապրող հայերը մետաքսով հարկ էին վճարում՝ քրիստոնեական հավատի համար (դին-իպագի)¹²: Ռուսական կառավարությունը, սակայն, ոչ միայն չի վերացնում այդ հարկը, այլև Նուխին հանձնելով մի այլ խանի՝ Զաֆար Ղուլիին (նախկին խանը փախել էր), հովանավորում է նրան: Խանի հասցեին բնակչության բողոքները դիտվում էին որպես անհնազանդություն ցարական իշխանությունների նկատմամբ: 1814 թ. խանության 300 բնակիչներ (հայեր ու ադրբեջանցիներ) մեկնում են Թիֆլիս՝ խանի կամայականությունների դեմ կառավարչապետին բողոքելու և հարկի վերացում խնդրելու¹³: Սակայն նրանց 20 օր շրջափակում են զինվորներով, ապա 25 հոգու աքսորում Սիբիր, իսկ մնացածներին հանձնում խանի դատաստանին¹⁴: Աքսորյալներից երկուսը՝ Հովհաննես Մուրադխանովը և Գրիգոր Մկրտչի Գարասանովը, 1815 թ. փետրվարի 10-ին Սարատովից նամակով դիմում են ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին՝ օգնության խնդրանքով¹⁵: Այս խնդրանքին ընթացք տալու և աքսորյալներին փրկելու ուղիների հարցը քննարկման նյութ է դառնում Պետերբուրգի հայկական դաղութում: Աքսորականների իրավունքների սլաշտպանությամբ հանդես գալու վտանգավոր պարտականությունն ստանձնում է Հարություն Արարատյանը¹⁶: Սարատովից եկած հիշյալ նամակը նա թարգմանում է ռուսերեն և իր ընդարձակ բացատրականի հետ 1815 թ. հուլիսին ներկայացնում ցարական կառավարությանը՝ հանձին օտար դավանությունների միևնույն Գուլիցինի¹⁷: Հ. Արարատյանը փորձում է ապացուցել աքսորյալների անմեղ լինելը, քննադատում է Կովկասի կառավարչապետների, մասնավորապես Ռտիշչևի քմահաճ դատաստանը նրանց նկատմամբ, ցույց տալով, որ խռովարարների անվան տակ նրանց աքսորելը ոչնչով արդարացված չէ: Նա գրում է. «...Нухийские армяне явились к главнокомандующему в тома толиком числе (300 հոգի—Պ. Զ.), думая сим способом более удостоверить в истине их страданий и преклонить милостивому на них воззрению, а не по побуждению духа возмущения. Да и что сия порсть безоружных людей, пришедших из далекого места своего жи-

¹² Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 27, վավ. 41:

¹³ «Акты, собранные кавказскою археографическою комиссией», под ред. Ад. Берже, т. VI, ч. I, Тифлис, 1874, էջ 721 (այսուհետև՝ АКАК).

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Ավելի ուշ՝ նույն թվականի դեկտեմբերին, Հարություն Արարատյանին նուխեցիների դրության մասին հանգամանորեն տեղեկացնում է նաև Ներսես Աշտարակեցին (Մաշտոցի անվ. Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 100, նույն տեղում, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164r, վավ. 883):

¹⁷ Նույն տեղում, Կաթ. դիվան, թղթ. 27, վավ. 41:

лица к командующему войсками, могла что либо другое нести в мушкетерах своих, кроме покорности и смирения?»¹⁸

Բացատրականի հեղինակը պահանջում է, որ Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականությունը կիրառելիս հաշվի առնվեն հայ ժողովրդի մատուցած ծառայություններն ու նվիրվածությունը Ռուսաստանին, սահմանափակվեն տեղական իշխողների կամավականությունները: Հ. Արարատյանը փորձում է իր «խորհուրդներով ու խոստումներով» Անդրկովկասում շահագործվող բնակչության շահերից բխող որոշակի բարեփոխումներ կատարել սակ, ռուսական կառավարությանը «գալթակղելով» սովասվող ավելի մեծ եկամուտների հեռանկարով:

Հարություն Արարատյանի այս գրությունը անհետևանք չէր կարող անցնել¹⁹: Աքսորականների համար դրա արդյունքը փոքր էր²⁰, մինչդեռ Հարություն Արարատյանի դեմ հալածանքներ սկսվեցին: Նա փորձեց պայքարին մասնակից դարձնել իր հայրենակիցներին ևս, սակայն անօգուտ: 1815 թ. սեպտեմբերին ոմն Սիմեոն Նիկիֆորով Պետերբուրգից եփրեմ կաթողիկոսին գրում է. «Здесь ваши одноверцы или слишком мало, или вовсе не помышляют об общей пользе, а только о своей. Почти все вместо того, чтобы помогать Артемию, кто и как может, или смотреть на него с завистью или даже действуют против его, следовательно и против всей нации... Артемий в полной мере чувствует и на самом деле старается оказать благодарность свое к России, как истинный и верный подданный, а с тем вместе старается полезным и нации своей в справедливом деле, киково теперь начатое...»²¹

Ներսես Աշտարակեցին, որից ևս Հ. Արարատյանը պահանջել էր միջամտել գործին, ղգուշորեն պատասխանում էր. «Վերջապես դու ևս ընդ այլսն մի մեղադրիր դիս, սիրելի, իբրև թէ իցեմ ես անդգալ վասն վշտաց... ազգի իմոյ, այլ զի չունեմ ղգորութիւն, և աւելի ևս երդամաբ և թագաւորական օրինօք կամ կաշկանգեալ, ղի՞նչ ունիցիմ սունել, բայց եթէ աղօթել...»²²:

Միայնակ մնալով և ղգալով, որ հետագա պայքարն իր ուժերից վեր է, Հ. Արարատյանը ստիպված է լինում խորհել ասպարեղից հեռանալու մասին: Պետերբուրգում գտնվող Հ. Արարատյանի գործունեության կարևորությունը գիտակցող Աշտարակեցին 1816 թ. փետրվարի 19-ին գրում է. «...Կամիմ ես, թէ որքան կարելի գուցէ յամբերութեամբ մնասցես այդր, ուր կարող ես թէ յաջողեսցէ աստուած շահել զանձնդ և ղաշխարհ համանգամայն առաւել, քան հեռանալովդ յանապատս: Եւ թէ հարկաւոր ևս լիցից մինչ իսպառ հեռանալն

¹⁸ Նույն տեղում, էջ 5—6:

¹⁹ Այն հանձնվել էր Նուխի բնակիչ Մակար Դուրասարյանին, որը և ջուղմունք էր տվել «О доходах Шекинской провинции и местечка Сальян» (АКАК, т. VI, ч. I, էջ 728—731). Նշելով նաև Արարատյանի նամակում բերված փաստերի իրավացիությունը:

²⁰ 1818 թ. հունվարին Շաքիի բնակիչները գեներալ Երմոլովին գրավոր խնդրում են թույլ տալ 25 արսորականներից 6-ին, որոնք դեռ արսորում էին գտնվում, վերադառնալ: Նրանք հայտնում են նաև, որ արսորականներից 8-ը մահացել է, իսկ մնացածները վերադարձել են (АКАК, т. VI, ч. I, էջ 728—730):

²¹ Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 27, վավ. 51:

²² Նույն տեղում, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 883, Այ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 100:

յանասլատ՝ ահաւասիկ անապատ Հայաստան, ի սահմանս որոյ ի ներքոյ հովանաւորութիւնէ ուսաց փառաւորեալ տերութիւնէ կարող ես ճգնիլ ի վիճակի իմում ուր և հաճոյ ձեզ թուեսցի...»²³,

1816 թ. վերջերին Հ. Արարատյանը ստիպված էր թողնելու Ռուսաստանը 1817 թ. փետրվարին կամ մարտին նա արդեն Փարիզում էր²⁴, ուր մնաց շուրջ երկու տարի։ Այս շրջանի նրա գործունեության մանրամասները մեզ չեն հասել։ Հայտնի են միայն մամուլում ունեցած նրա բանավեճը Հակոբ Շահան-Ջրպետյանի հետ²⁵ և այդ առիթով Կլապրոտի հետ միասին Հովհան Ոսկերչյանի «Ժամանակագրության» թարգմանելն ու հրատարակելը²⁶։ Այդ տարիներին նա եղել է նաև եվրոպական այլ երկրներում, իսկ 1819 թ. փետրվարին կրկին վերադարձել Պետերբուրգ՝ Կ. Ջաբարյանի մոտ²⁷։ Ռուսաստան վերադառնալու թույլտվությունը ձեռք էր բերվել հաշատուր Լալարյանի ակտիվ միջնորդությամբ։ «Ի հերոն հետէ գրէ ինձ բարերարն իմ Կատարինէ Զախա-րովնայն. փոխանակ անարգ համարելոյ կրկնակի էք արարեալ շնորհն ձեր իմ վերայ և բանիւ ցույց տեալ ի կողմանէն իմ ընդ դէմ կացեալ հակառակից վասն մթացեալ սենեակին իմոյ, երկու ամ ևս ժամանակ մինչն դառնալս տեղդ. արդեօք երբ իցէ, որ կարողացայց հագուցանել ծառայութեամբ ձեր շնորհն», — գրում է Հ. Արարատյանը հաշատուր Լալարյանին Փարիզից։ Նա խոստանում էր կյանքն իսկ շինյալ նրա հանձնարարությունները ապագայում ևս կատարելու համար, «յանձն առնելով զիս ի շնորհս ձեր և ինչ որ եմ արարել պաշտօն ունիք հրամայեցեք մինչև կեանս չեմ խնայելոց»²⁸։ Սակայն Հ. Արարատյանը Պետերբուրգում երկար չի մնում և ձեռնարկում է իր երկրորդ

²³ Նույն տեղում, ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 813։

²⁴ Տե՛ս «Собрание актов относящихся к обозрению истории армянского народа», ч. III, М., 1838, էջ 292։ 1818 թ. հուլիսի 9-ին «Gazette de France» լրագրում Արարատյանը բանավեճին հղվածում նշում է. «ներկայումս 16 ամիս է, ինչ ես գտնվում եմ Փարիզում»։

²⁵ «Собрание актов...», ч. III, էջ 288—295։

²⁶ «Mémoire de Jean Ouosk'herdjian», prêtre arménien de Wagarchapad, pour servir a l'histoire des événements qui ont eu lieu en Arménie et en Georgie a la fin du dix-huitième siècle et ou commencement du dix-neuvième, suivis de vingt-huit anciennes inscriptions arméniennes, traduit de l'arménien a l'aide de M. Aroutioun Astwatsatour; par Jules Klaproth, Paris, 1818, 79 էջ։ Նույնը տե՛ս նաև J. Klaproth, Mémoires relatifs a l'Asie, Paris, 1824, էջ 224—309։ Այս աշխատությունը, որ ընդգրկում է 1751—1805 թթ. իրադարձություններն Անդրկովկասում, Հ. Ոսկերչյանը գրել է 1811 թ. Հարություն Արարատյանի խնդրանքով. որն այն օգտագործել է իր «Կյանքը» շարադրելու ժամանակ։ (Հայերեն բնագիրը տե՛ս Ա. Արարատյան, Համառոտ վարք և գրաւոր գործք տնայն Յովհաննու աւագ բա՛ճ. Մարտիրոսեան Ոսկերչեանց Վաղարշապատցոյ, Տիֆլիս, 1859, տե՛ս նաև «Կռունկ հայոց աշխարհին», 1862, № 4, էջ 278—316։ Ա. Արարատյանի լրացումները վերջին հրատարակության կապակցությամբ տե՛ս նույն տեղում, 1862, № 8, էջ 589—593)։ Ռուս. թարգմանել է Ալ. Երիցյանը, «Летопись протоперея Тер-Огана Воскерчяни» («Кавказская старина», 1873, № 7—8, էջ 192—195)։ Հայկ Տեր-Աստվածատրյանցի վկայությամբ «այնտեղ (Փարիզում—Պ. Չ.) նա մի քանի ուրիշ (Ոսկերչյանի ժամանակագրությունից բացի—Պ. Չ.) գրքեր էլ տպեց» («Բառարան հայ կենսագրութեանց 1441—1904», Թիֆլիս, 1904, էջ 142)։

²⁷ Արարատյանի Պետերբուրգ վերադարձը շնորհավորել է Եփրեմ կաթողիկոսը. 1819 թ. փետրվարի 25-ին Կատարինե Ջաբարյանին ու Հարություն Արարատյանին ուղղված նամակներով (ՀՄՄՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 46, էջ 32ս)։

²⁸ Մաշտոցի անվ. Մատենադարան, Հաղարյանների արխիվ, թղթ. 104, գործ 8, վավ. 185։

նապարհվում է Պոլիս: Հոկտեմբերի 13—14-ին նա դեռևս գտնվում էր Կուրուչեսմե նավահանգստում: Այդտեղ նա կրկին հանդիպել է Գ. Ավալիշվիլուն³⁵ և կրկին մերժել միասին ճանապարհորդելու նրա առաջարկը, այս անգամ էլ պատճառաբանելով, թե նավատիրոջը կանխապես վճարված է երթևեկության վարձը, իսկ նավատերը հրաժարվում է այն վերադարձնելուց³⁶: Սրանով առժամանակ ընդհատվում են Հ. Արարատյանի ու Գ. Ավալիշվիլու հանդիպումները ճանապարհորդության ընթացքում: Հ. Արարատյանն այդ ժամանակա-միջոցում լինում է Զմյուռնիայում³⁷, Ալեքսանդրիայում ու Լիբիայում:

Գ. Ավալիշվիլու և Հ. Արարատյանի հաջորդ հանդիպումը տեղի է ունենում Կահիրեում, 1820 թ. փետրվարի 9-ին³⁸: Այդ օրը Գ. Ավալիշվիլու տեղեկություններ, իրեն է այցելում Ալեքսանդրիայից ժամանած Հ. Արարատյանը: Հետևապես, Հ. Արարատյանը Լիբիայից նորից վերադարձել էր Ալեքսանդրիա և նոր միայն ճանապարհվել Կահիրե: Կահիրեում Հ. Արարատյանը մնում է մինչև 1820 թ. մարտի 2-ը: Այդ ընթացքում նա հաճախ էր հանդիպում Գ. Ավալիշվիլու և ռուսական դիվանագիտական ներկայացուցիչների ու գործակալների հետ³⁹:

1820 թ. մարտի 2-ին Գ. Ավալիշվիլու գլխավորած քարավանի կազմում Հ. Արարատյանը Կահիրեից ճանապարհվում է Երուսաղեմ: Անցնելով Փելեազ, Սալհյա, Կատայա, Արիս-Կալա, Ռափա, Ղազա, Ռաֆլա, էմմալոս քաղաքներով, քարավանը 1820 թ. մարտի 18-ին հասնում է Երուսաղեմ: Այստեղ Հ. Արարատյանը մնում է մինչև 1820 թ. ապրիլի 5-ը: Հիշյալ օրը նա այցելում է Գ. Ավալիշվիլուն և հրաժեշտ է տալիս՝ Շամ (Դամասկոս) գնալու համար: Ճանապարհորդության այս հատվածի հանգամանքները դեռ պարզ չեն: Դիտենք միայն, որ նա վերադարձել է Պետերբուրգ 1821 թ.: 1825 թ. հունիսի 28-ին Կլապրոտին ուղղված նամակում Հ. Արարատյանը հայտնում է, թե «1821-ին մի քանի օրով եկա Ս. Պետերբուրգ՝ բարեկամներիս տեսնելու համար, բայց գործերս վատ ընթանալու պատճառով մնացի Պետերբուրգում, քանի որ տոկոսներս չեմ կարողանում ստանալ»⁴⁰: Նա Պետերբուրգում մնում է մինչև 1826 թ., որովհետև այդ թվականին նա արդեն Հայաստանում էր: Հովհ. Ղրիմեցին Հաղբատի Ս. Նշան վանքի պատմության մեջ հետևյալ հիշա-

³⁵ Նույն տեղում, էջ 88: Գ. Ավալիշվիլին գրում է, թե երբ իրենց նավը նավահանգիստ էր մտել, ինքը տեսել է ափին լեկերի հետ շրջող Հ. Արարատյանին: Վերջինս էլ տեսնելով Գ. Ավալիշվիլուն, բարձրացել է նրա մոտ և պատմել իրենց նավի խորտակվելու, նոր նավ վարձելու մասին, միաժամանակ դժգոհել նավի վրա լեկերի հարեանությունից:

³⁶ Գ. Ավալիշվիլու այս առաջարկներից պետք է ենթադրել, որ նրան հայտնի էր Հ. Արարատյանի ճանապարհորդության ուղղությունը, և որ իրենց ճանապարհները համընկնում էին: Քանի որ Գ. Ավալիշվիլին ափ է իջնում Ալեքսանդրիայում, հետևաբար Հ. Արարատյանն էլ այդ նավահանգստում ափ է իջնելուց հետո է ճանապարհվել Լիբիա: Այս փաստը միաժամանակ ցույց է տալիս, որ Հ. Արարատյանը Գ. Ավալիշվիլուն հետևելու հանձնարարություն չուներ:

³⁷ Զմյուռնիայից նա Ֆրանսիայի դեսպանի կամ գլխավոր հյուպատոսի միջոցով Կլապրոտին է ուղարկել իր արկածներից մեկի նկարագրությունը (տե՛ս Հ. Արարատյանի նամակը Կլապրոտին, հմտ. ծան. 30):

³⁸ Պ. ՎՅՎԸՈՅՅՈՒՐ, ս. յ. աշխ., էջ 151:

³⁹ Նրանք միասին դրոսանքների ու բուրգերը դիտելու են գնում, այցելում են սուլթանի սգկիթը, Մուհամմեդ Ալիի ամսուանոցը և այլն:

⁴⁰ Մոսկվայի Հայկական եկեղեցու ել և մտից մատյանից տեղեկանում ենք (համառոտված ապագրվել է Դոնի Ռոստովում, 1879 թ. «Հարիրամեակ կենարար սուրբ խաչի վերացման Մոսկվայի հայոց եկեղեցուն»), որ 1811 թ. փետրվարի 18-ին եկեղեցու ունեցած պարտքերի

տակությունն է թողել. «Յայս աղբիւր (խոսքը «Քոռաղբյուրի» մասին է— Պ. Զ.) ստեպ յաճախէր պարոն Յարութիւն Աստուածատուրեանն Վաղարշապատցի Արարատով, որում դէպ եղև կալ աստէն ընդ ամիսս ինչ եւ ի ջրոյ անտի ըմպէր ախորժանօք իբրեւ ի կենդանի ջրոյ դրախտին փափկութեան եւ զգայր բաւական օգուտ առ անձին զօրութիւն եւ առողջութիւն յիրում տկարութեան»⁴¹: Հաղբատում Հ. Արարատցւանի լինելու մասին է վկայում նաև հետևյալ փաստը: Նա Աբովյանին Հաղբատում խնդրել է արտագրել Կարամ-զինի ուղեգրութիւնից մի փոքրիկ հատված. «Արտահանել ետու ես՝ Յարութիւնս Աստուածատուրեան Վաղարշապատցի զսոյն զայս սակաւամասն հատուած բանի՝ որ ի 282 երեսոյ գրիւր այսօրինակ թէ՛ յեկեղեցւոյ Սելիստինա՝ ուր էին բաղմութիւնք պատկերաց և արձանաց, էր ընդ նոսա եւ յիշատակարան Լևոնի Արքային Հայոց՝ որ հալածեալ գոլով ի թուրքաց, մեռաւ ի Փարէզ ի 1383 ամին: ...Ի խնդրոյն վերոյիշեալ պարոնին՝ արտահանեցի ի ռուս բնագրէ անտի թարգմանութեամբ հանդերձ, խաչատուր դպիրս Ապովեան Քանաքեղոցի: Ի 1826 ամին, ի 3 ամսեանն նոյեմբերի, ի Սուրբ Նշանի վանս՝ որ ի Հաղբատ:— Որոյ և բնագիրն մնաց առ իս»⁴²:

Հ. Արարատցւանի Հայաստանում գտնվելու մասին երրորդ տեղեկութիւնը 1827 թ. հունիսի 30-ին Հովհաննես և Խաչատուր Լազարյաններին էջմիածնից Ներսէս Աշտարակեցու գրած նամակում եղած վկայութիւնն է, թե «Արարատեանն աստ առ մեզ կայ և եղիցի մինչև յաւարտ պատերազմացն յԵրեւան»⁴³: Այս տեղեկութիւնից իրավացիորեն եզրակացվել է, որ Հ. Արարատ-

վարման համար 14 անձնավորութիւն զրամական օգնութիւն է ցույց տվել: Ցանկում Հարութիւն Աստվածատուրյանը հինգերորդն է (նույն տեղում, էջ 93): 1818 թ. երեք նվիրատուներից մեկն է «Յարութիւն Աստուածատուրեան Օգանով»՝ 100 ռ. (նույն տեղում): 1818—1819 թթ. եկեղեցին իր պարտքերից 4563 ռ. վճարել է «ի զրամոց Յարութիւն Օղանեանց» (նույն տեղում, էջ 94): 1815—1822 թթ. եկեղեցին Հարութիւն Աստվածատուրյան Օղանյանցին է վճարել տարեկան 300 ռ. որպէս փոխատու զրամի տոկոսներ (նույն տեղում, էջ 95—98): Հ. Օղանյանցը «կտակել» էր, որ «եկեղեցին կամ իւր պարտքը վճարէ և իւր գրաւ գրած տունը սեպհականէ, կամ յարմար միջոց՝ տունը վաճառէ և պարտքերը վճարելուց յետոյ մնացեալ փողը ստանայ: Եկեղեցին ու՞ր տարի վճարեց նրա պարտքի տոկոսը և տունը ծախելուց ստացավ 4563 ռուբ.» (նույն տեղում, էջ 95, ծան. 9): Հովակիմ Աղազարյանին (Լազարյան) ներկայացրած «ի 1814 և յունվարի միջոց Մոսկովու հայոց երկու եկեղեցեաց միոյ տարւոյ հաշուադրութիւն»-ի մեջ Գրիգոր Մորոզովը նշում է. «Արտեմի Բողդանիչին ըստ զօրութեան կտակի նորուն փող ետու— 300» (1814 թ. դեկտեմբերի 31. Մոսկովա), Մաշտոցի անվ. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 102, գործ 6, վավ. 447, էջ 2:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ Արտեմի Բողդանիչը, Հարութիւն Աստվածատուրյանն ու Հարութիւն Աստվածատուրյան Օգանովը նույն անձնավորութիւնն է և նույն ինքը՝ Հարութիւն Աստվածատուրյան Արարատցւանը (Վաղարշապատցի)—Артеми́й Богданов Ара́ратский-ն: Հետաքրքիր է, որ նա 1810 թ. բնակվել է Մոսկովայում («Հարիրամեակ կենարար սուրբ խաչի վերացման Մոսկովայի հայոց եկեղեցւոյն», աշխատասիր. Հակոբ Սուրենյանցի, Դոնի Ռոստով, 1879, էջ 120):

Հ. Արարատցւանը կապրոտին ուղղված վերոհիշյալ նամակում (1825 թ.) նշում է նաև իր հասցեն՝ Պետերբուրգ, Նեսկի պողոտա, Հայկական եկեղեցու տուն (ընդգծումը մերն է—Պ. Զ.):

⁴¹ «Յովհաննու Ղրիմեցւոյ Պատմութիւն հուշակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին», հրատ. Համադասպ Ոսկեան, Վիեննա, 1965, էջ 25, հմտ. Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան (կյանքը, գործը, ժամանակը), Երևան, 1967, էջ 250, ծան. 1:

⁴² Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 248—249:

⁴³ Մաշտոցի անվ. Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 791, էջ 53ա:

լանը մասնակցել է ռուսական բանակի 1827 թ. ևրևանյան արշավանքին: Նա, ինչ խոսք, «բուժվելու» նպատակով չէր գտնվում պատերազմական գործողությունների թատերաբեմում և Հաղբատից նոյեմբերին նրա հեռանալն էլ պատահական չի եղել: 1826 թ. օգոստոսին, ռուս-պարսկական պատերազմը սկսվելու կապակցությամբ, ցարական կառավարությունը Անդրկովկաս է ուղարկում լրացուցիչ զորամիավորումներ: 1826—1827 թթ. այդ առիթով բանտից ու աքսորից ազատվեցին և Անդրկովկաս՝ ռազմաճակատ ուղարկվեցին նաև նշանավոր դեկաբրիստներ ու նրանց հարած մի շարք այլ ղինվորական ու հասարակական գործիչներ: 1826 թ. օգոստոսին շտապ Անդրկովկաս ուղարկվեց 1812 թ. հայրենական պատերազմի հերոս, գեներալ Դենիս Դավիդովը: Նրա հետ Անդրկովկաս եկավ նաև նույն թվականի հունիսի 2-ին բանտից ազատված Գրիբոյեդովը: Նրանք 1826 թ. սեպտեմբերի 3-ին արդեն Թիֆլիսում էին, որտեղից մի քանի օր հետո Դենիս Դավիդովը ուղարկվեց Լոռի—Փամբակ՝ դուրս բշխելու պարսիկներին⁴⁴: Դենիս Դավիդովը հաջողությամբ կատարում էր իր պարտականությունները, երբ նրան 1826 թ. նոյեմբերին ետ կանչեցին Թիֆլիս⁴⁵: Մնում է ենթադրել, որ Հարություն Արարատյանի՝ «ամիսս ինչ» Լոռիում (Հաղբատում) գտնվելը և նոյեմբերին Հաղբատն անակնկալ թողնելը կապված էր ռազմական գործողությունների հետ⁴⁶: Նա ևս Թիֆլիս էր տեղափոխվել, անշուշտ, 1826—1827 թթ. ձմռանը և մնացել իր եղբոր մոտ, որի մասին հիշատակում է Պ. Պոռչյանը, Հ. Արարատյանի «Կյանքի» իր թարգմանության առաջաբանում⁴⁷: Հ. Արարատյանը, հավանաբար, մինչև «յաւարտ պատերազմացն յՆրևան» մնացել է Անդրկովկասում, այնուհետև կրկին մեկնել Ռուսաստան⁴⁸:

1830 թ. Հ. Արարատյանը ձեռնարկում է մի նոր ճանապարհորդություն՝ դեպի Հնդկաստան: Ռուսաստանից մեկնելով Կ. Պոլիս, 1830 թ. աշնան վերջերին, վերահաս ձմռան պատճառով նա ճանապարհը չի շարունակել, այլ անցել է Տրապիզոն, ուր մնացել է վեց ամիս և իր այս ուղևորության մասին տեղեկություններ թողել 1831 թ. մայիսի վերջերին գրած ծավալուն (68 քառատող) բանաստեղծության մեջ⁴⁹: Դժվար է ասել՝ այս երրորդ ճանապարհորդությունը որտե՞ղ է ավարտվել և իրո՞ք նա Մուշ է այցելել, մահացել ու թաղվել Լիմ անապատում, ինչպես Պ. Պոռչյանն է հաղորդում բանավոր զրույցների հիման վրա⁵⁰: Համենայն դեպս, 1831 թ. հետո նրա մասին այլևս տեղեկություններ չեն հանդիպում:

Մենք փորձեցինք հին ու նոր աղբյուրների հիման վրա համառոտակի ուրվագծել Հարություն Արարատյանի կենսագրությունը: Նորօրյա հետազոտողին նա ներկայանում է իբրև հայ իրականության մեջ ռուսական կողմնո-

⁴⁴ М. Нерсисян. Из истории русско-армянских отношений, кн. II, Ереван, 1961. էջ 30:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Շտապ տեղափոխության պատճառով է, որ Կարամզինի ուղեգրության՝ Հ. Արարատյանին պատկանող բնագիրը մնացել է ևս. Արովյանի մոտ և նա այդ մասին հատուկ նշում է արել:

⁴⁷ «Վաղարշապատեցի Յարութին Արարատեանի կեանքը», էջ Թ:

⁴⁸ ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 57, ց. 1, գ. 44, էջ 11ա:

⁴⁹ Նույն տեղում, էջ 11ա—17բ:

⁵⁰ «Վաղարշապատեցի Յարութին Արարատեանի կեանքը», էջ Ժ:

որոշման երդվյալ ջատագով՝ իր 20-ամյա տարիքից սկսած մինչև 1830—1831 թթ., երբ վերջին անգամ ուղևորության էր մեկնում: Ո՛չ ցարական պաշտոնեությունից կրած հալածանքներն ու ծառայողական իջեցումները և ո՛չ էլ հայրենակիցներին նպաստավոր լինելու անկարելիությունները շասսանեցին Ռուսաստանի հանդեպ տածած նրա հավատը: Հիշյալ առումով Հ. Արարատյանը արժանի է մասնավոր դնահատության:

Թվում է, նրա թողած գրավոր ժառանգությանը ծանոթացած մարդիկ, մանավանդ հետազոտողները, վաղուց արդեն աղատված պիտի լինեին նախապաշարումներից ու կաշկանդումներից՝ անաչառությամբ գնահատելու նրա իրական վաստակը: Բայց, ցավոք, շատ խնդիրներ պարզվելու փոխարեն առավել մթագնեցին. հոգևորականների հասցեին կատարած դատափետումների համար Արիստակես Եպս. Սեդրակյանը որոշեց մենագրությամբ «պարզել Հ. Արարատյանի կեղծիքը», ամբաստանելով նույնիսկ նրա գործի հայե-րեն թարգմանչին՝ Պերճ Պողոսյանին⁵¹, Ա. Սեդրակյանի աշխատության ոգեկոչած մոլորությունն այնքան մեծ էր, որ վստահություն ներշնչեց անգամ նիկողայոս Մառին⁵²:

Տարբեր ժամանակներում Հ. Արարատյանին վերագրված ամբաստանու-թյունների ու մեղադրանքների մեջ, սակայն, կա մեկը, որ հիմնովին նենգա-փոխում է իրողությունը և սպառնում վարկաբեկելու ազնիվ գործչի հիշա-տակը պատմության առաջ:

Աղա-Մահմեդ խանի Թիֆլիս կատարած արշավանքի ժամանակ Հե-րակլ II-ին հաջողվում է հավաքել և պատերազմի դաշտ դուրս բերել ընդա-մենը 4—5 հազար զինվոր, որից երկու հազարը օգնական զորքեր էին՝ Արև-մուտյան Վրաստանի թագավոր Սողոմոն I-ի գլխավորությամբ, մինչդեռ Աղա-Մահմեդ խանի բանակում կար մոտ 30—35 հազար զինվոր: Հարու-թյուն Արարատյանն իր «Կյանքում» Հերակլի զորքերի սակավաթվությունը բացատրում է նրանով, որ որոշ արքայազներ իրենք զորքերով չէին ներկա-յացել թագավորին: Այս բացատրությունը (որն այժմ ընդունված է և մասնա-գիտական գրականության մեջ՝ որպես պարտության պատճառներից մեկը), ինչպես նաև Գիորգի արքայազնի (հետագայում՝ Գիորգի XII, 1798—1800 թթ.) մասին Արարատյանի գրքում եղած հաղորդումները ժամանակին վրդովեցրել են Արևմտյան Վրաստանի կառավարչուհի, Գիորգի XII-ի դուստր Նինա Դա-դիանին: Նա 1814 թ. ուսական կառավարությանն է դիմել՝ Հ. Արարատ-յանի գրքի արգելման պահանջով: Կառավարությունը մերժել էր այդ⁵³:

1844 թ. գրված «Աղա-Մահմեդ խանի մուտքը Թիֆլիս» երկի հեղինակ Ալեքսանդր Զամբակուր-Օրբելիանին Հ. Արարատյանին ներկայացնում է որ-

51 «Հարություն Արարատյանի կեղծիքը պարզեց Ա. Ե. Ս.», Բաքու, 1894:

52 Н. Я. Марр, Подлог Артемия Арапатского раскрыл А. Е. С., Баку, 1894 (տե՛ս «Записки восточного отделения императорского Русского Археологического общества», т. IX, СПб., 1896, էջ 311—313):

53 ЦГИАЛ, ф. 1284, оп. 4а, 1814, III отд. I ст., д. 246, թթ. 84—106: О. П. Марко-ва, Восстание в Кахетии 1812 г., М., 1951, էջ 321: Նինա Դադիանիից առաջ, ըստ երևույթի, նման վերաբերմունք են ցուցաբերել նաև հայ հասարակայնության ներկայացուցիչներից ոմանք: Այդ երևում է Հ. Արարատյանի «Сын отечества»-ի խմբագրությանը ուղղած 1814 թ. մար-տի 12-ի նամակից ու հրատարակիչների ծանոթությունից: Տե՛ս «Сын отечества», СПб., 1814, ч. 12, № 12, էջ 259—261:

շարքի օրը, Բիֆլիսում չի եղել. դրանից մի քանի օր առաջ նա արդեն տեղափոխվել էր Կախեթ⁶⁰:

Եթե Հ. Արարատյանին վերաբերող նման մեղադրանք գոյություն ունենար մինչև 1820—1830-ական թթ., ապա այդ մասին որևէ հիշատակություն կամ ակնարկ պիտի ունենալինք Դ. Ավալիշվիլու մոտ, որի հետ նա բաղմիցս հանդիպել է Մերձավոր Արևելք կատարած իր ճանապարհորդության ժամանակ (1819—1820 թթ.): Մինչդեռ Գ. Ավալիշվիլու «Ուղեգրության» մեջ արտակարգ մտերիմ ու միայն բարեկամական վերաբերմունք ենք տեսնում Հ. Արարատյանի նկատմամբ: Գ. Ավալիշվիլին «Ուղեգրությունը» շարադրել է 1819—1820 թթ. ճանապարհորդությունից հետո: Նա զոհն կզոհվանար և իր մտերմության մասին չէր պատմի: Իրականում մինչև 1830-ական թթ. Հ. Արարատյանի «դավաճանության» մասին պատմող զրույցներ չեն եղել:

Հ. Արարատյանի անվան շուրջ ստեղծված վրույցի շարամիտ հերյուրանք լինելն ասպցուցող կովաններից մեկն էլ նրա անսահման հայրենասիրության փաստն է, ամուր համոզմունք դարձած ուսական կողմնորոշումը: Նա իր հայրենիքում անձամբ ճաշակել էր պարսից բռնակալների հարստահարման ու ճնշումների ողջ դառնությունը, հենց այդ բռնակալության ճիրաններից Ռուսաստան փախչելու ճանապարհին է. որ ստիպված էր մի քանի ամիս մնալ Վրաստանում: Անկարելի է պատկերացնել, թե նա կարող էր որևէ աջակցություն ցույց տալ պարսից զորքերին: Հ. Արարատյանը լավ էր գիտակցում Անդրկովկասի ժողովուրդների ճակատագրի միասնական լինելը: Անցյալ դարի 40-ական թթ. որոշակի միտումներով հորինված և նրան վերագրված հերյուրանքները պետք է մերժել վճռականորեն:

Հ. Արարատյանը XVIII դարի վերջերի և XIX դարի առաջին տասնամյակների հասարակական-քաղաքական ու մշակութային երևելի գործիչներից մեկն է: Նրա կյանքի ու գործունեության առավել հանգամանալից ուսումնասիրությունը կարող է ուղադրվել նոր էջեր բացահայտել հայ-ռուս-վրացական պատմա-մշակութային փոխհարաբերությունների պատմությունից:

НОВЫЕ МАТЕРИАЛЫ О ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ АРТЕМИЯ АРАРАТСКОГО

П. А. ЧОБАНЯН

(Резюме)

Артемий Арааратский (Арутюн Араратян) — один из видных общественных деятелей первой трети XIX в., сторонник русской ориентации в армянской действительности, о жизни и деятельности которого существуют различные мнения и оценки. В статье приводятся ряд новоявленных и уже известных сведений о совершенном им в 1817—1818 гг.

60 Պրոֆ. Ի. Յինցաձեն իրավացի կասկածով է վերաբերվում Ալ. Զամբակուր-Օրբելիանիի հաղորդմանը. «Նա (Օրբելիանին—Պ. Չ.) չի ջոկում մեղավորն ու արդարը: Բայց Հ. Արարատյանը արդյոք ունե՞ր Աղա-Մահմեդ խանի դեսպանին աղափելու հնարավորություն՝ այս դեռևս ապացուցելի է: Ընդհանրապես դեռևս ապացուցելի է պարսկական դեսպանի՝ սեպտեմբերի 11-ի առափնույն իր տիրոջ մոտ գնալը» (Ո. ՇՈՆՇԱԺԵ, ՁԼԱ-ՄԱՅՄԱԴ-ՆԱՆԻ ՏԱՅՎԵԼՍԻՄԱ ՆԱ-ԵԱՐՏՎԵԼՈՅԵ, ԵՅ., 1969, էջ 203):

путешествии в Европу. На основе сообщений «Путешествия» грузинского политического деятеля и писателя Г. Авалишвили выясняется также время и маршрут второго путешествия Артемия Араратского по странам Ближнего Востока и Африки. Его пребывание в Закавказье в 1826—1827 гг. было обусловлено военными действиями, в частности русско-персидской войной 1826—1828 гг. Существующее в литературе мнение относительно причастности Артемия Араратского к измене при защите Тбилиси в 1795 г. является тенденциозным и антинаучным.